ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի դեկան,
բան. գիտ. թեկն., դոցենտ
ash.galstyan@mail.ru
ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
դոցենտ, բան. գիտ. թեկն.
mnacakanyaneva@mail.ru

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ (ՇՐՋԱՍՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ)

Բանալի բառեր և արտահայտություններ. Ամենայն հայոց բանաստեղծ, Հովհ. Թումանյան, Գևորգ Հինգերորդ կաթողիկոս, շրջասույթ, հուշեր::

Ключевые слова и выражения: Всеармянский поэт, Ов. Туманян, Католикос Геворг V, перифраз, воспоминание.

Key words and expressions: The pan-armenian poet, H. Tumanian, Catholicos Gevorg V, periphras, memories.

Հայտնի է, որ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը հասարակական-քաղաքական ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել է հայ ժողովրդին անմնացորդ ծառայելու սկզբունքով և մինչև կյանքի վերջը եղել է նրա կողքին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հայ ժողովրդի համար ամենաողբերգական օրերին, բանաստեղծը հավասարապես կրել է այն ցավն ու տառապանքը, որ հերթական անգամ բաժին էր ընկել իր ազգին: Եվ հենց այդ օրերին էր, որ, ինչպես գրում է Անդրանիկ Ծառուկյանը, Էջմիածնում՝ «հավատքի ու արյան այն շտեմարանում», Թումանյանը «ստացավ անմահության իր մկրտությունը»՝[1] *ամենայն հայոց բանաստեղծ* պատվանուն-շրջասույթի[2] տեսքով:

[1] Տե՛ս Ա. Ծառուկեան, Հին երազներ, նոր ճամբաներ, Պէյրութ, 1960, էջ 77-78:

Շատ են *ամենայն հայոց* բաղադրիչով շրջասական բնութագրությունները՝ *ամենայն հայոց բանաստեղծ, ամենայն հայոց բանաստեղծուհի, Ամենայն հայոց հայրապետություն, Ամենայն հայոց կաթողիկոս, Ամենայն հայոց թագավոր, ամենայն հայոց սոխակ, ամենայն հայոց մայրաքաղաք* և այլն: Շարքում իր բացառիկ տեղն ունի *ամենայն հայոց բանաստեղծ* շրջասությունը, որ հարյուրամյա ճանապարհ է անցել և վաղուց դարձել հայ ժողովրդի շուրթերից հնչող նվիրական անուններից: Այն հաճախադեպ է հանդիպում ոչ միայն ժամանակակիցների վկայություններում, այլև հետագա սերունդների գնահատական-արժևորումներում: Անշուշտ, այս տեսանկյունից անհամեմատ կարևորվում են ժամանակակիցների հուշագրական[3] պատումները՝ Նվարդ Թումանյան, Աշոտ Պատմագրյան, Վահան Թոթովենց, Ստեփան Զորյան, Վարդգես Ահարոնյան, Մայրանուշ Պարոնիկյան և այլք:

Մեր ուսումնասիրության խնդիրն է պատմական հեռանկարի մեջ ի մի բերել և դիտարկել՝ պատմական ի՛նչ փաստ է ընկած *ամենայն հայոց*

---

[2]Շրջասությունը (պերիֆրազ) (հին հուն.՝ περίφρασις «բնորոշ արտահայտություն», «այլասացություն», περί՝ peri -«շուրջ» և φράσις՝ phrasō - «ասում եմ») գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցներից է: Դրանք շրջուն արտահայտություններ են, բառեր կամ բառակապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունը անուղղակիորեն է անվանվում: Շրջասություն կարելի է համարել նաև փոխանունության այն ենթատեսակը, երբ անձը, առարկան, երևույթը ներկայացվում են նրանց էական հատկանիշն արտահայտող բնորոշումով կամ նկարագրական եղանակով, և դա հիմք է տալիս հասկանալու, թե խոսքն ում կամ ինչի մասին է: Մարդկային լեզուն միշտ էլ դիմել է արտահայտության այս հնարին: Շրջասական որոշ կապակցություններ դարերի խորքից են գալիս և հնչեղ են բոլոր ժամանակներում, օրինակ՝ *հայերենի առաջին ուսուցիչ, պատմության հայր, մայր գետ* և այլն:

Շրջասությունների կարելի է հանդիպել տարբեր աղբյուրներում՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, գրաբարագիր հեղինակների ստեղծագործություններում, հայ նոր և նորագույն գրականության, ինչպես նաև գեղարվեստական վավերագրության լեզվական տիրույթում:

[3] Հայտնի է, որ հուշագրությունը (ֆրանս. memoires), ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողությունն է, որ ունի ժանրային առանձնահատկություն առաջին հերթին գրավոր խոսքի դրսևորման առումով: Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների, հարազատների, ընկերների պատմածներ և այլն:

բանաստեղծ շրջասույթի հիմքում[4], որի վավերականության հարցը հաճախ է դարձել ոչ միայն Հովհ. Թումանյանի ժամանակակիցների, այլև նոր սերնդի հետաքրքրության առարկան: Այժմ էլ հնչում են կարծիքներ, թե շրջասույթի հիմքը ժողովրդական մտածողության միֆականացված պատմություն է, ավելին, կոմունիստական եկեղեցահալած քաղաքականության արդյունք: Հոդվածում առաջին անգամ փորձ է արվում ի մի բերելու Հովհ. Թումանյանի և Գևորգ Հինգերորդ կաթողիկոսի ժամանակակիցների դրվագային հուշերը, վկայությունները, որոնցում առկա ընդհանրությունների ու տարբերությունների քննությունը կօգնի որոշակի կարծիք ձևավորելու շրջասույթի իրական հիմքերի վերաբերյալ, շրջասույթ, որն անուղղակիորեն ոչ միայն ամփոփում է Թումանյանի ազգային-քաղաքական մտածողությունն ու մարդկային նկարագիրը, իրականության թումանյանական ընկալումը, այլև այդ համապատկերում նախանշում ժամանակի ընդհանուր մթնոլորտը:

Հայտնի է, որ Թումանյանը երկու անգամ՝ 1914-ի նոյեմբեր-դեկտեմբերին և 1915-ի հունիսին, եղել է Արևմտյան Հայաստանում, տեսել հայ ազգի ողբերգությունը: Առաջին անգամ հայոց բանաստեղծը՝ իբրև Ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեի անդամ, Շիրվանզադեի, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցի և հոգևոր այլ այրերի հետ մեկնում է ռազմաճակատ՝ պարզելու ճշմարտությունը կամավոր ռազմի դաշտ մեկնած հայորդիների մասին. պտտվում էին ստահոդ լուրեր, թե ռուսական բանակում կռվող հայ կամավորները զբաղված են կողոպուտով և սպանում են քուրդ և թուրք խաղաղ բնակիչներին[5]: Ճանապարհորդության մասին կա երկու աղբյուր. մեկը Թումանյանի ծոցատետրերն են, մյուսը՝ Շիրվանզադեի «Պատերազմի վայրերում» ակնարկը: Ն. Թումանյանը նշում է, որ հայրը մտադրություն է ունեցել «այդ օրագրի հիման վրա գրել ու հրատարակել իր ուղեգրությունները»[6], սակայն չի արել՝ համոզված, որ

[4] Շրջասույթի ստեղծման պատմությանը անդրադարձել է նաև գրականագետ Ս. Հովհաննիսյանը: Տե՛ս Ованес Туманян в годы Первой мировой войны, Ереван, издательство «Гитутюн», 2018, էջ 270-273.

[5] Հ. Թումանյանի՝ Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության մանրամասները տե՛ս Լ. Կարապետյանի «Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը» աշխատության մեջ (Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1992, էջ 96-174), ինչպես նաև բանաստեղծի ծոցատետրերի գրառումները, հոդվածներն ու ակնարկները (Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 8, Երևան, 1997):

[6] Ն . Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 2009, էջ 121:

ճշմարիտ և անկեղծ տպավորությունները չեն տպագրվի, իսկ սուտ ու քողարկված փաստեր ինքը չի կարող ներկայացնել:

Մեր ուսումնասիրության տիրույթից դուրս է Թումանյանի՝ վերը հիշատակված ճանապարհորդության մանրամասներին անդրադառնալը: Սակայն նշենք, որ ավելի ուշ՝ երկրորդ անգամ ռազմաբեմում հայտնված բանաստեղծի համար շատ անհասկանալի հարցեր պարզվում են, երբ դարձյալ Ազգային բյուրոյի հանձնարարությամբ Թումանյանը Վանի ազատագրումից մեկ ամիս անց լինում է այնտեղ:

Վանից վերադառնալուց հետո՝ հուլիսի 23-ին, մամուլի էջերում հայտնվում են լուրեր այն մասին, որ Վանից, Ալաշկերտից և այլ բնակավայրերից դեպի Իգդիր և Էջմիածին են գալիս մեծ թվով գաղթականներ: Հուլիսի 29-ի գիշերը Թումանյանը մեկնում է Էջմիածին: Սարսափելի տեսարան էր ներկայացնում պատմական այս սրբավայրը: Գերմարդկային ջանքեր ու ներքին ուժ, ինքնամոռաց մարդասիրություն էին պահանջվում յուրաքանչյուր մեկից, ով փորձում էր ինչ-որ բանով օգնել թշվառ ու անօգ գաղթականներին: Նրանց մեջ առաջին գծում Թումանյանն էր, ով անձնուրաց անում էր ամեն ինչ՝ փոքրիշատե թեթևացնելու անօթևան ու հայրենազուրկ մարդկանց տառապանքները: Այդ օրերի մասին Անդրանիկը գրում է՝ Թումանյանը «իր տունը, իր ընտանիքի վայելքները թողուցած, եկավ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածինի, Իգդիրի և Երևանի փողոցներուն և վանքի պատերուն տակ խռնված գաղթականներուն օգնելու... »[7] :

Ավելի ուշ՝ հոկտեմբերի 21-ին, «Լումա» մեկօրյա թերթի առաջին համարում տպագրվում է «Հիշողություններ Էջմիածնի որբանոցից» նյութը, որտեղ անհուն տառապանքների բովով անցած բանաստեղծը, մեկ-մեկ վերապրելով, հիշում է Էջմիածնի որբանոցում հավաքված մինչև տասը հազար երեխաներին. «Ես էլ նրանցից մեկն եմ, որ էս երեխաների մեջն էի, բայց երբ էսօր նստում եմ ու աշխատում եմ վերհիշել, կարծես թե նրանց՝ երեխաներին չեմ տեսել: Չեմ տեսել, չեմ ճանաչել առանձին-առանձին: Սաստիկ, սաստիկ ծանր էր նրանց հետ խոսելն ու խոսեցնելը… Եթե խոսել ու խոսեցրել եմ, էն էլ շատ քիչ, պատահմունքով… Սակայն շարունակ աչքիս առաջն է նրանց բազմությունը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմությունը…»[8]:

---

[7] Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 551:

[8] Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, էջ 179-180:

Վանից տեղահան եղած երեխաների մեջ է եղել նաև հայտնի դերասանուհի Մայրանուշ Պարոնիկյանը, որի հիշողությունները վկայում են «հայոց որբերի հայրիկի» հոգատարությունը երեխաների հանդեպ: Անհայր մնացած[9] աղջնակը, տասնհինգ օր շարունակ քայլելով, հասել էր Վաղարշապատ: Ճաքճքած ու վերքերով լի ոտքերով ամեն օր աղբյուրի մոտ ջրի հերթ էր կանգնում: «Մի մարդ մոտեցավ,– հիշում է դերասանուհին,– նայեց... վերքոտ ոտքերիս... Ասացի՝ կոշիկ չունեմ:

-Մայրիկ ունե՞ս, անուշի՛կս:

-Ունեմ:

Հետո ինձ թղթե դրամ տվեց ու ասաց.

–Մորդ կասես, որ սրանով քեզ համար չստեր առնի: Վազեցի մերոնց մոտ... Հարցրին ո՞վ էր: Ցույց տվեցի»[10]: Փոքրիկ Մայրանուշը իհարկե չէր կարող իմանալ, թե ով է այդ մարմնացյալ Բարությունը: Իմացավ հետո և սրտի խորքում պահեց Հ. Թումանյանի լուսե պատկերը:

Ուրեմն, ավելի քան պարզ է, թե հոգեկան ի՛նչ ցնցումների ու հարվածների է դիմացել բանաստեղծը և ոչ միայն դիմացել. նա աշխարհում հանդիպող մարդկային այն հազվագյուտ տեսակից էր, որ «ապրում են տանջվողներին օգնելու համար»[11]:

Անշուշտ, չենք կարող շրջանցել այն փաստը, որ գաղթականության հիմնական պատսպարանը եղել է Էջմիածինը, որը դարեր շարունակ բացառիկ դեր է կատարել պետականություն չունեցող ժողովրդի համար, ինչը գնահատել են ժամանակի առաջադեմ գործիչներն ու մտավորականները: Բացառություն չէր նաև Թումանյանը: Նա իր ողջ կյանքում մեծապես առնչվել է հոգևորականության հետ[12], մտահոգվել հոգևորականի բարձր կոչման պահպանման խնդիրներով: Դեռևս 1892 թ. իր դասընկեր, ապա Մայր Աթոռի միաբան Արսեն Ղլտճյանին աբեղա ձեռնադրվելու առթիվ շնորհավորելով՝ բանաստեղծը գրում է. «Սիրելի՛ ընկեր, հայոց կուսակրոն հոգևորականությունը այս օրերում ծանր գործ ունի կատարելու. մեր ներկա վիճակի բարվոքման և ապագայի

[9] Հորը գրեթե չի հիշում: Արհավիրքի առաջին ժամերին նրան սպանել են բարբարոսները իրենց տան շեմին:

[10] Գ. Աբաջյան, Մայրանուշ Պարոնիկյան, Երևան, 2001, էջ 5:

[11] Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, էջ 179: Այս բառերը Թումանյանը գրել է գաղթականներին օգնող օրիորդներից մեկի՝ Սաթենիկի մասին, ով հիվանդանոցում աշխատելիս և գաղթականներին օգնելիս վարակվում է ժանտախտով ու մահանում:

[12] Հայ եկեղեցու հետ կապն առաջին հերթին պայմանավորված է եղել հոգևորական հայր ունենալու հանգամանքով:

ապահովության խնդիրը դրած է նորա առաջին, դու էլ մտնելով այդ դասակարգի մեջ, պատասխանատու հոգատարի պարտականություններ ես հանձն առնում»[13] : Այս մտահոգությունները վկայում են՝ բանաստեղծը կարևորում է հոգևորականների դերը և բարձր գնահատում հատկապես մտավոր սերուցքին (Գալուստ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյան, Սահակ վարդապետ Ամատունի, Կոմիտաս վարդապետ և այլք), նրանց բանասիրական ու պատմագիտական աշխատանքները: 1912 թ. «Հին ու նոր պարականոն շարականներ» գրքի առթիվ հեղինակին՝ Սահակ Ամատունուն, գրում է. «Էջմիածինը որքան կարևոր լինի իր վարչական նշանակությամբ, ավելի սիրելի է դառնալու, երբ գրական ու գիտական գործերը ճոխանան ու հաճախանան նրա պարիսպների մեջ: Եվ ինձ համար էդ տեսակի գործերն ու գործիչները միշտ մնալու են ավելի թանկ ու սիրելի, քան ամեն տեսակի պաշտոնյաներ»[14]:

Հիշյալ ժամանակահատվածում ազգանպաստ գործունեություն է ծավալում նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը: Նրա կաթողիկոսության շրջանը համընկավ հայ ժողովրդի պատմության ամենադրամատիկ փուլի հետ՝ Մեծ եղեռն, Մայիսյան հերոսամարտեր, Առաջին հանրապետության հռչակում, Հայաստանի խորհրդայնացում, հայ եկեղեցու նկատմամբ բռնաճնշումներ: Հայրապետն ակտիվորեն մասնակցում է հայկական հարցի և բարենորոգումների առնչությամբ տարվող աշխատանքների համակարգմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նրա կոնդակով և անմիջական նախաձեռնությամբ կազմավորվում է գաղթականներին օգնող Կենտրոնական ազգային կոմիտեն, որի բաժանմունքները ստեղծվում են Երևանում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Պետրոգրադում, Մոսկվայում:

Սարդարապատի ճակատամարտի բախտորոշ օրերին, չնայած զինվորական ղեկավարության պահանջին, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և անձամբ կաթողիկոսը չեն տեղափոխվում Սևանավանք՝ ապաստանելու, իսկ Մայր Աթոռի միաբաններն իրենց անմիջական մասնակցությամբ ռազմաճակատի առաջին գծում քաջալերում են հայ մարտիկներին: Հատկանշական է այդ առթիվ կաթողիկոսի կոչը[15]

---

[13] Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 9, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 110-111:

[14] Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 153:

[15] Այս իրողության գեղարվեստական նկարագիրը տրված է Բ. Ուլուբաբյանի «Սարդարապատ» փաստագեղարվեստական վեպում (տե՛ս Բ. Ուլուբաբյան, Սարդարապատ, Երևան, 1989, էջ 153-167):

հայ ժողովրդին. «Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսադրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան երկրի վրա: Թուրքը, կոտորած ու ավեր փռելով, գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք ինձ առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողոովրդի վերջին կտորը: Ո՛չ և ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ Աթոռից»[16]: Հայոց կաթողիկոսը հրամայում է վեց օր շարունակ հնչեցնել հայոց եկեղեցիների զանգերը և ոտքի հանել հայ ժողովրդին: Հայ հոգևորականներից շատերն այդ օրերին խաչի փոխարեն զենք են վերցնում: 1918 թ. Մայիսյան հերոսամարտի հաղթական ավարտի մեջ մեծ էր Գևորգ Հինգերորդ Սուրենյանց կաթողիկոսի դերը: Ցեղասպանությունը վերապրած հայրապետն իր անվանն ավելացնում է Վշտալի մականունը:

Արդ, ինչ հանգամանքներում և ինչպես է ծնվել *ամենայն հայոց բանաստեղծ* շրջասությունը: Բանաստեղծի և կաթողիկոսի կենսագրական այդ էջը հիշատակագրում են շատ հեղինակներ: Տարագիր և հայրենազուրկ հայության հավաքատեղի Էջմիածնում են տեղի ունենում հայոց երկու մեծերի՝ Հ. Թումանյանի և Գևորգ V կաթողիկոսի հանդիպումն ու երկխոսությունը:

Ավելորդ չէ նկատել, որ ներկայացվող աղբյուրները գեղարվեստական վավերագրության պատումներ են և կառուցվածքային առումով ունեն զգալի նմանություններ: Բոլոր պատումներում էլ գերակշռում են նկարագրական խոսքի դրսևորումները, անշուշտ, երբեմն հագեցած գեղարվեստական պատկերներով: Մեծ մասը ականատեսների վկայություն է: Սակայն այս շարքում, անշուշտ, հարկ է առանձնացնել նախ Թումանյանի գրառումներն այդ իրադարձության մասին, որոնք ամենաարժանահավատն են. «19-ի գիշերը օգոստոսի. մթնեց, սկսեց փայլատակել ու որոտալ և կաթկթել անձրևը: (Գրիգորն ու Վարդգեսն եկան իմացան): Գնացինք Բագրատի, Խորենի, Մաթևոսի մոտ- Արսենն էլ էնտեղ էր- որ բոլոր շինությունների դռները բացեն՝ գաղթականներին ներս թողնելու: Մայր տաճարը դժվարացան- Գայանեն ու նոր Վեհարանը թողին:

[16] Ամենայն հայոց կաթողիկոսներ. հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008, էջ 41-42:

Ժողովրդին ձեն տվի- տարա- ուսանողները:

Սոսկալի խոնում»[17]:

Գաղտնիք չէ, որ բանաստեղծի կողքին այդ պահին եղել է դուստրը՝ Նվարդը, որը նույն օրվա մասին պատմությունը սկսում է օգոստոսյան այդ ծանր գիշերվա նկարագրությամբ. փոթորիկ, կայծակ, որոտ, հորդառատ անձրև. բաց երկնքի տակ մնացած գաղթականություն: Ուսանողներ Լևոն Լիսիցյանի, Լյալյա Աճեմյանի, Ալեքսանդր Բարխուդարյանի ուղեկցությամբ Թումանյանը շտապում է գաղթականությանը շենքերում պատսպարելու: «Առաջին հերթին նա նկատի ուներ վեհարանի նոր, կիսավարտ շենքը,- գրում է Ն. Թումանյանը,- որ կաթողիկոսը մերժել էր գաղթականությանը հատկացնել: Հայրիկը զայրացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին՝ նա գաղթականությանը տարավ դեպի նոր վեհարանի շենքը... Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին[18]…

Ամենայն հայոց կաթողիկոսին դուր չէր եկել, որ հայրիկը կառուցվող վեհարանը դարձրել էր գաղթականների ապաստարան: Հետևյալ օրը հայրիկին կանչում է իր մոտ բացատրության այդ ինքնակամ արարքի համար. չէ՞ որ ինքը արգելել էր: Հայրիկի բացատրությունը չի գոհացնում կաթողիկոսին, և նա հիշեցնում էր՝ «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ», հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտե՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց բանաստեղծն եմ»»[19]:

Մեկ այլ ականատես՝ Վահան Թոթովենցը, գրողին հատուկ բառապաշարով, գեղարվեստական նկարագրություններով անդրադառնում է այս դրվագային պատումին. «Սկսվեց տեղատարափ: Առաջին կաթիլները ժպիտ առաջացրին մինչև անգամ մեռնողների մռայլ աչքերում, բայց երբ անձրևը սկսեց հեղեղել գետինը և տասնյակ հազարներ մնացին կավային ցեխի մեջ, թշվառությունը աճեց, լեռնացավ: Ամեն տեղ լցվեց գաղթականներով, բայց հազարներ դեռևս դուրս մնացին, տեղատարափի և ոռնացող կայծակի ահեղ սպառնալիքի առաջ:

Թումանյանը վազեց, բռնի բաց արավ նոր կառուցվող հայրապետական Վեհարանը, որ մինչև այդ անձեռնմխելի էր:

---

[17] Հովի. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 8, Երևան, 1997, էջ 410:

[18] Տե՛ս Հովի. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1991, էջ 165-167: «Աղավնու վանքը» բալլադի սյուժեն հիշեցնում է հայ ժողովրդի խորհրդավոր ճակատագիրը: Հայ գերիներն անվերջ մտնում էին վանք և հայր Օհանի սուրբ աջով վերածվելով աղավնիների՝ վերադառնում էին հայրենիք: Վերին խորհրդով ասես շարունակվում էր հայ ժողովրդի հավերժական թռիչքը:

[19] Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 130-131:

Գաղթականները լցվեցին ներս:

Դա զայրացրել էր Վեհափառին:

Ասում էին, որ երեկոյան Վեհափառը կանչել էր Թումանյանին, հանդիմանել նրան այդ «բռնի» գործողության համար:

Թումանյանը սկզբում ժպիտով էր պատասխանել, բացատրել էր հայոց հայրապետին, որ հազարներ անձրևի տակ, ցեխի մեջ են մնացել: Վեհափառը չէր կակղել: Թումանյանը պնդել էր, որ ինքը ճիշտ է վարվել: Վեհափառը նրան պատվիրել էր ուրիշ անգամ այդպիսի փորձ չանել: Թումանյանը պատասխանել էր, որ պիտի անի, եթե անհրաժեշտություն լինի: Հայոց հայրապետը կանգնել էր ոտքի և… հայտարարել.

-Դուք խոսում եք Ամենայն հայոց հայրապետի հետ:

Թումանյանը նրան պատասխանել էր.

-Իսկ դուք խոսում եք Ամենայն հայոց բանաստեղծի հետ:

Հետագայում այս դեպքի մանրամասնությունը ես լսել եմ նաև Թումանյանից, նա պատմում էր խորագույն հումորով, համեմելով այդ պատմությունը յուրահատուկ բացականչություններով…»[20]:

Այս մասին գրել է նաև Վ. Ահարոնյանը, որը, դարձյալ վկա լինելով անցուդարձին, դեպքը նկարագրում է այսպես: Երբ Թումանյանը նկատում է մռայլվող երկինքը, իսկույն իր մոտ է կանչում աշխատող երիտասարդներից մեկին և պատվիրում վազել Վեհարան և կաթողիկոսին խնդրել բանալ տալ բոլոր եկեղեցիների, վանքերի, ազատ շենքերի դռները և այդ գիշեր գաղթականությանը պատսպարել անձրևից: Կաթողիկոսը հրահանգում է բաց անել Գայանեի, Շողակաթի և Հռիփսիմեի վանքերը, բայց Վեհարանի նոր շենքին ձեռք չտալ …

«-Ի՜նչ,- ցասումից դողացող ձայնով բացականչեց Յովի. Թումանեանը.-անմիջապէս վերադարձիր Վեհարան և ասա՛ Ամենայն հայոց կաթողիկոսին, որ Ամենայն հայոց բանաստեղծը պահանջում է բաց անել նոր Վեհարանի դռները եւ պատսպարել գաղթականութիւնը:

Երբե՛ք, ոչ դրանից առաջ, ոչ դրանից յետոյ Յովի. Թումանեանին այդպէս զայրացած չէի տեսել:

Մի քանի րոպէ յետոյ լուր եկաւ, որ նոր Վեհարանի շէնքը եւս տրամադրուած է գաղթականութեանը»[21],- գրում է Վ. Ահարոնյանը: Այստեղ նկատվում է մի տարբերություն. բանաստեղծն ու կաթողիկոսն առնչվում են ոչ ուղղակիորեն, այլ միջնորդավորված:

---

[20] Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 136-137:

[21] Վ. Ահարոնեան, Յովաննէս Թումանեան. Մարդը եւ բանաստեղծը, Երևան, 2019, էջ 130-131:

Ստ. Զորյանի հուշերում այս դրվագը ներկայացվում է արդեն իբրև ժողովրդի մեջ տարածված մի պատմություն, որտեղ դարձյալ հիշատակվում է վերոհիշյալ երկխոսությունը. «Պատմում էին, թե կաթողիկոսը մերժել էր վանքապատկան ինչ-որ մի տուն ևս տրամադրել գաղթականներին: Թումանյանը պահանջել էր զայրացած: Կաթողիկոսը, բանաստեղծի այդ տոնից վիրավորված, կամեցել էր հասկացնել իր իրավունքը.

–Հիշեցե՛ք, պարո՛ն Թումանյան, որ ես Ամենայն հայոց կաթողիկոս եմ:

-Իսկ ես՝ ամենայն հայոց բանաստեղծ»[22]:

Այս իրադարձության մեկ այլ վկայության ենք հանդիպում Ա. Պատմագրյանի հուշերում: Վերջինիս պատմությունը փոքր-ինչ տարբերվում է արդեն ներկայացված տարբերակներից, որոնք, ինչ-ինչ տարբերություններով հանդերձ, ունեն զարգացման նույն հիմնաշարժը. Թումանյանը գաղթականներին ստեղծված անելանելի իրավիճակից փրկելու համար սեփական նախաձեռնությամբ է դիմում կաթողիկոսին: Այնինչ Պատմագրյանի հուշերում միջադեպը ներկայացվում է դիպաշարային այլ հիմքով. «Վանի ճակատը մեկնելու եւ գաղթականութեան վիճակը քննելու համար Թիֆլիսից մեկնել էր մի պատուիրակութիւն, որին մասնակցում էին Մեսրոպ արք. Մագիստրոսը, Շիրվանզադէն եւ Յովի. Թումանեանը: Պատուիրակութիւնը դէպի Իգդիր-Վան իր ճանապարհի վրայ Էջմիածին հանդիպեց՝ Կաթողիկոսին տեսնելու համար: Վեհարանից յետոյ հիւրերը պիտի այցելէին Ճեմարան եւ մեզ հետ հանդիպում պիտի ունենային»[23]: Հանդիպումը կայանում է, և առաջին խոսողը՝ Մեսրոպ սրբազանը, ներկայացնում է ռուսական նահանջող բանակի հետ Կովկաս փախչող գաղթականության ծանր վիճակը, նրանց օգնություն հասցնելու անհրաժեշտությունը: Ապա խոսում է Թումանյանը և պատմում Կաթողիկոսի հետ իրենց ունեցած տեսակցության մանրամասները և միջադեպը: Այդ օրերին մեծահարուստ Մանթաշյանի հովանավորությամբ վանքին մոտ կառուցվում էին երկու մեծ շենքեր՝ ճեմարանի աստղադիտարանն ու թատերասրահը և նոր վեհարանը: Սակայն պատերազմի հետևանքով անավարտ էին մնացել աստղադիտարանն ու թատերասրահը, իսկ վեհարանին պակասում էին միայն դուռ-պատուհանները: Գաղթականության հարցերով զբաղվող մարմիններն ուզում էին, որ նոր վեհարանը հանձնվեր իրենց իբրև գաղթականության

[22] Թումանյանը ժամանակակիցների հուշերում, նույն տեղում, էջ 114:

[23] Ա. Պատմագրյան, «Ամենայն հայոց բանաստեղծը» Էջմիածնում, «Բազին», հմ. 1, 1982, Պէյրութ, էջ 36:

ապաստարան: «Կաթողիկոսը կտրականապէս մերժում էր ա՛յն մտավախութեամբ, որ կիսաւարտ այդ շէնը աւերածութեան պիտի վերածուէր եւ դառնար համաճարակի բոյն՝ վտանգելով ճեմարանի եւ վանքի բնակիչների կեանքը: Օգտուելով այս պատուիրակութեան այցելութիւնից՝ յիշեալ մարմինները դիմում են նրա միջնորդութեան:

Կաթողիկոսի հետ այդ մասին խօսողը լինում է Թումանեանը, եւ հակառակ նրան, որ չի կարողանում կաթողիկոսին համոզել, սակայն շարունակում է պնդել: Կաթողիկոսը, այլեւս յոգնած անվերջ պնդումներից, բացագանչում է.- *«Ես, որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս՝ թոյլ չեմ տայ, որ գաղթականներ մտնեն դեռ չվերջացած վեհարանը եւ աւերեն»: «Ես էլ, որպէս ամենայն հայոց բանաստեղծ, պահանջում եմ, որ վեհարանի դռները բանաք գաղթականների առաջ»*: Ահա Թումանեանի վերագրուած ամենայն հայոց բանաստեղծ կոչումի աղբիւրը, որ պատմեց մեզ ինքը, Թումանեանը ծիծաղով՝ նոյն օրը»[24]:

Ինչպես նկատում ենք, վերոնշյալ պատումներից սկզբունքային առումով տարբերվում է Աշոտ Պատմագրյանի վավերական հիշատակությունը: Նա այդ ժամանակ եղել է Գևորգյան ճեմարանի սան և հիշյալ դեպքը շարադրել է սկզբնաղբյուրին ի մոտո: Այդտեղ ոչ միայն ներկայացվում են դեպքերն ու հեղինակի վերաբերմունքը, այլև որոշակի չափով վերլուծություն է տրվում:

Հարկ է նշել, որ գեղարվեստական վավերագրության առաջադիր պատումները կառուցվածքային հիմքով բաժանվում են երկու խմբի՝ ա. հեղինակը ներկայանում է իբրև ականատես, բ. հեղինակը ներկայացնում է ականատեսից լսածը (դեպքից որոշ մանրամասներ հեղինակներին պատմել է Հովհ. Թումանյանը): Պատմելով շրջապատող աշխարհի մասին՝ հեղինակների մեծ մասը ոչ միայն վկա է, ականատես և դիտող, այլև դեպքի մասնակից:

Հուշագրության բոլոր պատումներում էլ նկարագրական հիմքով հիշատակվում են հեղեղի հասնող հորդառատ անձրևը, և գաղթականության պատսպարվելը տեղատարափից: Դիտարկվում է Վեհարանի կիսավարտ շենքի մասին տեղեկույթը: Եվ վերջապես՝ բոլոր պատումների հիմքում ընկած է հայտնի երկխոսությունը՝ որպես էական փաստի հիշատակում: Այս ամենը հուշագիրների անձնական հիշողություններ են, որտեղ «անձնական» տարրը որոշակի տեսակարար կշիռ ունի: Կարծում ենք՝ այս հուշափաստերը կարելի է դիտել որպես

[24] Նույն տեղում, էջ 39:

գրականագիտական ուսումնասիրության պատառիկներ, որոնք խտացված ձևով ներկայացնում են Թումանյանի և կաթողիկոսի երկխոսությունը:

Վստահաբար կարող ենք ընդգծել, որ և՛ Ամենայն հայոց կաթողիկոսի, և՛ Ամենայն հայոց բանաստեղծի վարմունքի մեջ որևէ դիտավորություն չի եղել: Ժամանակակիցները վկայում են, որ հայոց հովվապետը մշտապես իր ժողովրդի կողքին է եղել և ծառայել գաղթականներին ու կարոտյալներին: Սակայն սկզբունքորեն դեմ է եղել դեռևս կիսավարտ վեհարանի շահագործմանը: Պատճառներից մեկը կարող էր լինել այն կարևոր հանգամանքը, որ շենքը տակավին օրհնված չի եղել, մի բան, որ զուցե հոգևոր առաջնորդի համար էական նշանակություն է ունեցել: Կամ կաթողիկոսը փորձել է պաշտպանել ճեմարանի սաներին՝ տարածված ժանտախտից: Սակայն Ամենայն հայոց բանաստեղծը անդրդվելի էր. նա անօթևան մնացած գաղթականներին օգնելու համար անում է կարելին ու անկարելին, հնարավորն ու անհնարինը: Այս դեպքերի տպավորության տակ Հ. Թումանյանն իր զգացումներն է արտահայտել իր ընտանիքին հղած նամակում. «Երեխաներ, երեխաներ, երեխաներ…անտեր, սոված, հիվանդ…»[25]:

Առաջադիր խնդիրը ուսումնասիրելով՝ նկատում ենք, որ այդ պարագային Ամենայն հայոց բանաստեղծին օգնել են նաև Մայր Աթոռի միաբանները: Ավելի քան համոզված ենք, որ երկու կողմերն էլ յուրովսանն մտածել և գործել են հայ գաղթականներին օժանդակելու համար: Այսպիսով՝ հիմնվելով բանաստեղծի և ժամանակակիցների վերոհիշյալ վկայությունների վրա՝ կարող ենք գալ հետևյալ եզրակացությունների:

1. Թումանյանը հայ ժողովրդի համար ծանր օրերին իր զավակների հետ համակ նվիրումով փորձել է օգնել գաղթականներին:
2. Նույն ժամանակահատվածում իր հայրենանվեր գործունեությամբ աչքի է ընկել նաև Գևորգ V Սուրենյանց կաթողիկոսը:
3. Այդ ժամանակ իրապես վեհարանի նոր կառուցված հատվածը դեռևս շահագործված չի եղել:
4. Այդ օրերին անհրաժեշտություն է առաջացել կառույցը օգտագործել իբրև գաղթականների ապաստարան:
5. Կաթողիկոսը, գաղթականներին աջակցելով հանդերձ, ինչ-ինչ պատճառներով դեմ է եղել նորակառուցի շահագործմանը:

[25] Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, Երևան, 1999 , էջ 228:

6. Տեղի է ունեցել երկխոսություն Հովհ. Թումանյանի և կաթողիկոս Գևորգ V-ի միջև (այստեղ՞ երկրորդական է դառնում՝ Թումանյանի նախաձեռնությա՞մբ է եղել այդ զրույցը, թե՞ բանաստեղծը հանդես է եկել իբրև միջնորդ):
7. Երկխոսության (էական չէ՝ երկխոսությունը եղել է դեմառդե՞մ, թե՞ միջնորդավորված) վերջնարդյունքում Թումանյանն իրեն անվանել է *Ամենայն հայոց բանաստեղծ*:

«Ամենայն հայոց բանաստեղծ» պատվանունը այն եզակի անվանումներից է, որ ձևավորման օրվանից սկսած մինչ մեր ժամանակները եղել և մնում է ամենասիրելիներից, և գրեթե չկա որևէ հայ մարդ, ում ծանոթ չլինեն այս շրջասույթն ու այն կրող բանաստեղծը:

Ա. Գալստյան, Ե. Մնացականյան

Ամենայն հայոց բանաստեղծը
(Շրջասույթի ձևավորման հիմքերը ժամանակակիցների վկայություններում)

Ամփոփում

Հոդվածը ներկայացնում է *ամենայն հայոց բանաստեղծ* շրջասույթի հիմքում ընկած պատմական փաստի վավերականության հարցը, որը հաճախ է դարձել ոչ միայն Հովհ. Թումանյանի ժամանակակիցների, այլև նոր սերնդի հետաքրքրության առարկան: Այժմ էլ հնչում են կարծիքներ, թե շրջասույթի հիմքը ժողովրդական մտածողության միֆականացված պատմություն է, ավելին, կոմունիստական եկեղեցահալած քաղաքականության արդյունք: Հոդվածում առաջին անգամ փորձ է արվում ի մի բերելու Հովհ. Թումանյանի և Գևորգ Հինգերորդ կաթողիկոսի ժամանակակիցների դրվագային հուշերը, վկայությունները, որոնցում առկա ընդհանրությունների ու տարբերությունների քննությունը կօգնի որոշակի կարծիք ձևավորելու շրջասույթի իրական հիմքերի վերաբերյալ, շրջասույթ, որն անուղղակիորեն ոչ միայն ամփոփում է Թումանյանի ազգային-քաղաքական մտածողությունն ու մարդկային նկարագիրը, այլև այդ համապատկերում նախանշում ժամանակի ընդհանուր մթնոլորտը:

А. Галстян, Е.Мнацаканян

Всеармянский поэт

(Основы образования перифразы по свидетельству современников)

Резюме

В статье представлен вопрос о подлинности исторического факта, лежащего в основе перифразы «всеармянский поэт», который часто оказывался не только предметом интереса современников Ов. Туманяна, а также нынешного поколения. И сейчас есть мнения, что основой перифраза является история, превращённая в миф, народного мышления; более того, это результат коммунистической политики, направленной против церкви. Впервые в статье сделана попытка собрать воедино фрагментарные воспоминания и свидетельства современников Ов.Туманяна и Католикоса Геворга V, анализ сходств и различий которых поможет сформулировать определенное мнение об истинных основах перифразы, которая не только косвенно суммирует национально-политическое мышление и человеческие качества Туманяна, но и в этом контексте определяет общую атмосферу времени.

A.Galstyan, E. Mnatsakanyan

The pan-Armenian poet

(The origin of periphrasis formation according to the evidence of contemporaries)

Summery

The article presents the question of the authenticity of the historical fact on which is based the periphrasis of ‘pan-Armenian poet’, which often turned out to be not only a subject of interest of H. Tumanian’s contemporaries, but also of the modern generation. Even now there are opinions that the basis of periphrasis is the history, turned into a myth, of popular mentality; moreover, it is the result of the communist policy directed against the Church. For the first time in the article, an attempt is made to bring together fragmentary memories and testimonies of the contemporaries of H. Tumanian and the Catholicos Gevorg V, an analysis of the similarities and differences of which will help to formulate a definite opinion on the true basis of periphrasis, which not only indirectly summarizes the national-political mentality and human qualities of Tumanian, but also in this context defines the general atmosphere of the time.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19